Հարգելի Սեդա,

Սկսած 2012 թվականի հունիսի 1ից Վանաձորում գործում է իմ պատգամավորական գրասենյակը, որտեղ ես կանոնավոր շաբաթական ընդունելություններ եմ իրականացրել, իսկ 2015 թվականից քաղաքացիների ընդունելություն իրականացրել եմ նաև Երևան քաղաքում Լուսավոր Հայաստան կուսակցության գրասենյակում։ Քաղաքացիների ընդունելության, նամակագրության միջոցով նրանց կողմից բարձրացված հարցերով զբաղվելու ավանդույթը այսօր էլ շարունակվում է, չնայած ես այլևս չեմ մեխծամասնականով կամ ռեյտինգայինով ընտրված պատգամավոր չեմ:

Ինչ վերաբերում է քաղաքացիների բարձրացրած խնդիրներին և դրանց լուծման ընթացքի ու իմ լիազորությունների հետ եղած կապին, ապա դրանք բազմազան են և ես իմ տարեկան հաշվետվություններում յուրաքանչյուր անգամ ներկայացրել եմ թե ինչ խնդիրներով են դիմել։ Իմ պատգամավորական գործունեության տարեկան հաշվետվություններին կարող եք ծանոթանալ իմ պաշտոնական կայքում www.edmonmarukyan.com

Հարգանքով,

Էդմոն Մարուքյան